

«ՓՈՂՈՑԱՀԱՅԵՐԷՆՈՎ» ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գեորգ Տեր-Վարդանեան

(Մատենադարանի Գլխավոր Ասանդակահ)

Համացանցային մերօրեայ չարիքներից մէկը լատինատառ (անգամ ռուսատառ) հայերէն գրելն է. յիշում եմ ինչ որ մէկն անգամ հայերէնի «տրանսլիտով» գրելը մետրապատառից աւելի նախընտրելի էր համարում: Այս որոմ-չարիքի դէմ արդարացի պայքար կայ (թէկուզ՝ դեռեալ բաւարար արդիւնք չի տուել):

Մրանից պակաս չարիք չեմ համարում մի այլ խոտելի համարում եւս. կան նաեւ խօսակցականով, անգամ՝ գոեհիկաբանութիւններով կամ իմ բարեկամ Ենովք Լազեանի խօսքով՝ «փողոցներէնով» գրող մարդիկ, ովքեր նոյնիսկ օժանդակ բայը նախորդ բառին (բուն բային) կպած են գրում, բառերը գրում են կիսատ-պոստ, հայատառ գրում են գրական հայերէնում ամենեւին չգործածուող օտար բառեր, կարճ ասած՝ հայերէն բառերի ուղղագրական պատկերները փոխում են անձանաչելիութեան չափ, ուստի և գրում են անկարդայի՝ «քիչի»* հայերէնով:

Ինչպէս էլ այդ մարդիկ պատճառաբանելիս լինեն իրենց վարմունքը, այս երեւոյթը համարում եմ հայերէնի՝ արդէն խորհրդային ուղղագրութեան գլխին բերուող մի նոր փորձանք. մենք այդ մարդկանց գրածները դժուար ենք կարդում, դժուար ենք հասկանում, յաճախ էլ բացարձակապէս չենք հասկանում:

Այս մարդկանց արածի տրամաբանական բնորոշումը հետեւեալն է. եթէ՝ սրանց հետեւելով, ամէն մարդ սկսի գրել իր ծննդավայր-գիւղի բարբառի ու առօրեային-արտասանութեան երանգների համեմատ, ապա մենք միմեանց գրածները բացարձակապէս չենք հասկանալու:

Յօգուտ հայերէնի լաւ ուղղագրութեան, դեռեալ 1997 թ. շարունակական երկու յօդուածով վերաշարադրել-վերագնահատել եմ Մանուկ Աբեղեանի «Գրաբարի երկբարբառները» հիանալի ուսումնասիրութեան («Նոր-Դար», 1980 թ. թիւ 187, 188, 189, 190, 191, 193, 194, 196, 197. վերահրատ.՝ Մանուկ Աբեղեան, «Երկեր», հտ. Ը. էջ 292-329) ուղղագրութեանը վերաբերող մասերը, որոնց մէջ խառնահայերէն ուղղագրութիւններին վերաբերող ճշմարիտ և իրատեսական գնահատականներ կան (Տէն Գ. Տեր-Վարդանեան, «Աբեղեանը հայերէնի խորհրդային ուղղագրու-

թեան դէմ» և՝ «Հայերէնի ուղղագրութեան փոփոխման մէկ-երկու պատճառ»,- «Ազգ», 5 և 11 Մարտի 1997 թ., թիւ 41, և 45՝ 1295 և 1299, էջ 4):

«Փողոցներէնով» գրողների համար գուցէ մի օր այդ յօդուածները վերարտադրեմ այստեղ, սակայն մինչ այդ շատ օգտակար եմ համարում նոյն Մանուկ Աբեղեանի մի այլ ծաւալուն և օգտակար յօդուածի սկիզբն ու վերջն այստեղ բերելը: Այդ յօդուածի խորագիրն է՝ «Մեր ուղղագրութեան մասին», փակագծային ենթավերնագիրն է՝ («Կարդացուած 1913 թ. Նոկտեմբերի 14-ին Ս. Էջմիածնում, Հասագգային Մեծ Յոբելեանի հանդէպի ժամանակ»), առաջին անգամ հրատարակուել է «Արարատ» ամսագրում՝ 1913, թիւ ԺԱ., էջ 1047-1071, թիւ ԺԲ., 1120-1141. վերատպուել է Մանուկ Աբեղեան, «Երկեր», հտ. Ը., էջ 330-366: Շատերը սա համարում են խորհրդային ուղղագրութեան «գիտական» հիմնատրում, սակայն այս ծաւալուն յօդուածում շատ նկատումներ հաստատում են ճիշդ հակառակը՝ որ հայերէնի ուղղագրութեան մէջ որեւէ փոփոխութիւն պէտք չէ անել:

Ահա առանց մի տառ անգամ փոփոխելու՝ Աբեղեանի իսկ գրած ուղղագրութեամբ բերում եմ նոյն Աբեղեանի յօդուածի սկիզբն ու վերջը, որոնք գուցէ ինչ որ բան համոզեն «փողոցահայերէնը» նախընտրողներին:

Մանուկ Աբեղեան, մեր ուղղագրութեան մասին

«Յոբելեական Յանձնաժողովը յարմար համարեց հայ գրի այս մեծ յոբելեանին խորհրդակցութիւն ունենալ մեր ուղղագրութեան մասին և ինձ առաջարկեց ներկայացնել մի զեկուցում, թէ արդեօք պէ՞տք է և կարելի՞ է փոփոխութիւններ մտցնել մեր աւանդական ուղղագրութեան մէջ, և ինչպիսի՞նք և ի՞նչ փոփոխութիւններ կարելոք է այժմ անել:

Ողջունելով մեր այս խորհրդակցութեան գործը՝ ես պիտի աշխատեմ պարզել իմ հայեացքս այս դժուար ու կնճռոտ խնդրի մասին, որ հայերէն բառերի գրի առնուելուց 1500 տարի յետոյ պէտք է որ իսկապէս առանձին ուշադրութեան արժանանայ:

Ամենից առաջ, առանց երկար բարակ բացատրութիւնների մէջ մտնելու, պիտի շեշտեմ մի սկզբունք, որ ընդհանուր ընդունուած է բոլոր ազգերից, դա այն է, որ ամէն գրական լեզուի համար միակերպ քերականութեան հետ անհրաժեշտ պայման է նաեւ միակերպ ուղղագրութիւնը, որով պահում է գրական լեզուի միութիւնը, և զանազան բարբառների մարդիկ,

որոնք խօսելիս յաճախ տարբեր արտասանության են հետեւում, իրար գրածը հեշտութեամբ հասկանում են: Դրա մէջ է հէնց գրական լեզուի և գրատու խօսքի մեծ նշանակութիւնը:

Կենդանի լեզուի դիմաց գրութիւնն անշուշտ մի պայմանական բան է, որ մենք կարող ենք փոփոխել. դա խօսուն լեզուի պայմանական պատկերն է միայն, որ գծագրում ենք, և ուրիշները դրանով ըմբռնում են մեր մտքերը: Նաականալի է, որ կենդանի խօսքի պատկերն ընդհանուր ընդունուած պիտի լինեն, ուրիշ խօսքով ուղղագրութիւնը միութիւն պէտք է ունենայ, որպէսզի նոյն լեզուն խօսող մարդիկ կարողանան մէկմէկու գրածը հեշտութեամբ վերծանել: Բացի այդ՝ բառերի պատկերները դարձ դար էլ չպիտի մեծ փոփոխութիւնների ենթակայ լինին, որպէսզի յաջորդ սերունդները չկորուեն նախորդների հետ՝ գրի միջոցով ստատոր հաղորդակցութիւն ունենալուց: Եթէ չլինի ուրեմն ուղղագրութեան այս ընդհանուր և տեսական միութիւնը, չի կարող գոյութիւն ունենալ և մի ընդհանուր գրական լեզու: Նայե՛ք նի համար աւելի մեծ է այս պայմանի նշանակութիւնը, քանի որ մենք ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նոյնանում են գոնէ միակերպ ուղղագրութեամբ: Ուստի հէնց սկզբից պիտի ասեմ, որ եթէ որ եւ է փոփոխութիւն պէտք է մեր ուղղագրութեան մէջ աւելի խառն դրութիւն մտցնի և մեր գրական լեզուներն իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է որ չլինի: Այս պատճառով այս խնդրին պէտք է շատ մեծ զգուշութեամբ մօտենալ:

«Արարատ», 1913/ԺԱ. էջ 1047-8, նոյնը՝ Մանուկ Աբեղեան, «Երկեր», հտ. Ը. էջ 330

Ահա և յօդուածի վերջը՝ եզրայանգումը.

«Իսկ մինչ այդ, ես միայն մի բան կարող եմ ասել, որ մեզնից ամէն մէկն էլ, ինչքան կ'ուզէ թող խորհի ու գրի մեր ուղղագրութեան մասին, բայց երբեք իրեն չհամարի մի ակադեմիայի հաւասար և ինչ որ ինքը մտածում է ու ճիշդ է համարում, երբեք իրատունք չունի և անմիջապէս գործադրելու:

Աւելի լաւ է ուղղագրութիւնը լինի սխալ ու դժուար, բայց միակերպ: Ես կը վերջացնեմ իմ խօսքս ինչով որ սկսեցի. փոփոխութիւն, իմ կարծիքով պէտք է և կարելի է անել որոշ չափով, բայց եթէ որ եւ է փոփոխութիւն պիտի վերացնի մեր ուղղագրութեան միութիւնը և մեր երկու գրական լեզուներն իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է որ չլինի: Իսկ մեր ամէն, իրեն մի մի ակադեմիա կարծող անհատների փոփոխութիւններին ուրիշ բան չի վիճակուած, բայց եթէ մի նոր խառնափնթոր դրութիւն մտցնել մեր ուղղագրութեան մէջ: Միայն հոգետր իշխա-

նութիւնների և գրագէտների միութեան ձեռնընդունութեամբ կազմուած բանիքուն մարմնի որոշումը մեզ համար ընդունելի և պարտադիր կը լինի: Իսկ մինչ այդ ձեռք պէտք է քաշել ամէն հին ու նոր փոփոխութիւններից և դառնալ աւանդական ուղղագրութեան: Այս է ուղիղ ճանապարհը»:(*)

«Արարատ», 1913/ԺԲ. էջ 1141, նոյնը՝ Մանուկ Աբեղեան, «Երկեր», հտ. Ը., էջ 366

Փողոցահայերէնի նոյնը
(Վերցուած եւ Դիմագրից)

«...ով ինչ ժամանակ ա ապրել ու ինչ արտառնովկայի մեջա ստեղծագործել. սա շատ կարևոր հարցա ընթնելու գրողին:

Ես էսի հիշողությամբ անընդհատ ցիտել եմ, բայց չէի հիշում, թե որտե եմ կարդացել:

Նողվածն էնքան կարևոր ա, որ վեկալա պահեմ: Ավելցնեմ, որ Նայստանի պարթեվ կաթողիկոսի հարստությունը դառավ թագավորի հարստությանը համեմատելի արդեն 4-րդ դարի կեսերին:

(*) Նարատուր մի թիւր մեկնաբանութիւն կանխելու համար ասեմ, որ 1922 թ. «Դեկտեմբ» Սովետական Նայստանի Լուսժողկոմատինը(**) կամ նրա գլխատրի՝ Պօղոս Մակինցեանի վճիռն էր, իսկ ո՛չ Լուսժողկոմատը, ո՛չ էլ «Պաօլոն» համազգային բանիքուն մարմին չէին:

(**) Լուսատրութեան (իմա՝ կրթութեան - Խմբ.) Ժողովրդական Կոմիտարիատ, որ կը նշանակէ՝ Կրթութեան Նախարարութիւն:

«...պիտի շեշտեմ մի սկզբունք, որ ընդհանուր ընդունուած է բոլոր ազգերից, դա այն է, որ ամէն գրական լեզուի համար միակերպ քերականութեան հետ անհրաժեշտ պայման է նաեւ միակերպ ուղղագրութիւնը...»

